

ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ԿԵԱՆՔ



ՀՈԿՏԵՄԲԵՐ 2015

Շաբաթ, 3 Հոկտեմբեր. - «Տօն Խաչի»։ գիշերային և առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցան Ս. Հրեշտակապետաց, որմէ յետոյ մատուցուեցաւ Ս. Պատարագ։ Ժամարարն էր Տ. Կորուն Վրդ. Բաղդասարեան։

Կիրակի, 4 Հոկտեմբեր. - «Բարեկենդան Վարագայ Ս. Խաչի Պահոց»։ գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Հրեշտակապետաց, որմէ յետոյ մատուցուեցաւ Ս. Պատարագ։ Ժամարարն էր Տ. Վագդէն Արդ. Ալիքեան։

Ուրբաթ, 9 Հոկտեմբեր. - Կէսօրէ ետք ժամը 3:00-ին Սիաբան Հայրեր թափօրով մեկնեցան Դպտոց վանքը։ Այնտեղ, Ս. Գէորգ Եկեղեցոյ մէջ պաշտուեցաւ երեկոյեան ժամերգութիւն և նախատօնակ։ Նախատօնակին, ինչպէս նաեւ երթ ու դարձին, նախագահեց Տ. Արիս Արք. Շիրվանեան։

Շաբաթ, 10 Հոկտեմբեր. - «Տօն Ս. Գէորգայ Զօրավարին»։ Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց։ Կարճ դադարէ մը ետք Սիաբան հայրեր, Սարկաւագներ և Ժառանգաւոր սաներ մեկնեցան Դպտոց Ս. Գէորգ վանքը։ Համանուն եկեղեցոյ մէջ մատուցուեցաւ Ս. Պատարագ։ Ժամարարն էր Տ. Աղան Արդ. Գոգչեան։ Յաւոր պատշաճի քարոզեց Տ. Պարետ Ծ. Վրդ. Երեցեան։ Ս. Պատարագէն ետք Սիաբանութիւնը պատուասիրուեցաւ Դպտիներու Հոգշ. Տեսչին կողմէ։ Երթ ու դարձի թափօրներուն նախագահեց Տ. Արիս Արք. Շիրվանեան։

Կէսօրէ ետք Տ. Սեւան Արք. Դարիպեանի գլխաւորութեամբ Սիաբանութիւնը մեկնեցաւ Ս. Յարութեան տաճար։ «Հրաշափառ»ի հանդիսաւոր մուտքին և Ս. Գերեզմանի ուխտէն ետք, երեկոյեան ժամերգութիւնն ու Վարագայ Խաչի նախատօնակը պաշտուեցան մեր Վերնամատրան մէջ, ապա կատար-

ուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս։ Թափօրապետն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան։

Կիրակի, 11 Հոկտեմբեր. - «Տօն Վարագայ Ս. Խաչին»։ առաւօտեան ժամը 6:30-ին Սիաբանութիւնը մեկնեցաւ Ս. Յարութեան Տաճար։ Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան Տաճարի մեր Վերնամատրան մէջ։ Կարճ դադարէ մը ետք Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ մատուցուեցաւ Սուրբ և Անմահ Պատարագ։ Պատարագէ և յաւոր պատշաճի քարոզեց Տ. Արիս Արք. Շիրվանեան։

Շաբաթ, 17 Հոկտեմբեր. - «Սրբոց Եօթանասուն և երկու աշակերտաց քրիստոսի»։ գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Հրեշտակապետաց, որմէ ետք Ս. Պատարագ մատուցուեցաւ։ Ժամարարն էր Տ. Պարետ Ծ. Վրդ. Երեցեան։

Կիրակի, 18 Հոկտեմբեր. - «Գ. զկնի Խաչի»։ գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները մատուցուեցան ի Ս. Հրեշտակապետաց։ Կարճ դադարէ վերջ, միաբաններէն ոմանք մեկնեցան Ռամլէի Ս. Գէորգայ վանք՝ տարեկան աւանդական ուխտագնացութեան համաձայն։ Ս. Պատարագ մատուցեց Հոգշ. Տ. Ասպետ Վրդ. Պալեան։ Յաւոր պատշաճի քարոզեց Հայաստանէն հիւրաբար այցելող Արմաիրի Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Սիոն Եպս. Աղամեան։

Ուրբաթ, 23 Հոկտեմբեր. - Նախատօնակ «Սրբոց Թարգմանչաց վարդապետացն մերոց»։ յետ երեկոյեան ժամերգութեան, Նախատօնակին նախագահեց Ս. Աթոռոյս Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Դարիպեան։

Շաբաթ, 24 Հոկտեմբեր. - Տօն «Սրբոց Թարգմանչաց վարդապետացն մերոց» (տօն ազգային-եկեղեցական)։ գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները կատարուեցան ի Ս. Հրեշտակապետաց, որմէ ետք ըստ սովորութեան Ս. Պատարագը մատուցեց Կիւլպէնկեան Մատենադարանի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Նորայր Վրդ. Գազազեան, որ նաեւ տուաւ օրուան քարոզը՝ բնաբան ունենանով օրուան «Օրհնութիւն» շարականին առաջին տունը՝ «Որք զարդարեցին տնօրինաբար...», շեշտելով թարգմանիչ հայրերուն բերած նպաստը Հայ կեանքին մէջ և անոնց կերտած «Ոսկեդարը»։ Ս. Պատարաւն ետք, ըստ ընկալեալ սովորութեան, կատարուեցաւ Հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտօն՝ Ս. Աթոռոյս և ազգիս

մեծանուն բարերար Գալուստ Կիլպեմկեանի և իր կողակցին ու ծնողաց հոգիներուն համար: Նախագահեց Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Կիրակի, 25 Հոկտեմբեր. - Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները կատարուեցան ի Ս. Հեշտակապետաց: Կարճատեղ դաղարե մը ետք, միաբանութիւնը, գլխաւորութեամբ Արիս Արք. Շիրվանեանի, մեկնեցաւ Ս. Յարութեան տաճար: Պատանատեղիի և Ս. Գերեզմանի ուխտէն ետք Ս. Պատարագ մատուցուեցաւ վերնատան «Հայկական Գողգոթա»ի մէջ: Ս. Պատարագ մատուցեց Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէճեան:

Շաբաթ, 31 Հոկտեմբեր. - «Ս. Չորից Աւետարանչացն». առաւօտեան ժամերգութիւնը կատարուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Կարճ դաղարե մը ետք միաբաններէն ոմանք, գլխաւորութեամբ Ս. Յարութեան տեսուչ Հոգշ. Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեանի, 8:15-ին մեկնեցաւ Ս. Յարութեան Տաճար:

Ըստ սովորութեան Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի գաւթին վրայ բացուող Ս. Յովհաննէս Աւետարանչի հայապատկան մատրան մէջ: Ս. Պատարագը մատուց Տ. Աւետիս Վրդ. Իփրաճեան:

ՆՈՅՆՄԱՐԵՐ 2015

Կիրակի, 1 Նոյեմբեր. - Առաւօտեան և գիշերային ժամերգութիւններէն ետք, ի Ս. Հրեշտակապետաց, Աւագ սեղանին վրայ Ս. Պատարագ մատուց Տ. Թէոդորոս Վրդ. Զաքարեան:

Երկուշաբթի, 2 Նոյեմբեր. - Ս. Յովսէփ Աստուածահօր Տօնին առթիւ Ս. Պատարագ մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Հայր Յովսէփի գերեզմանին վրայ: Ընկալեալ սովորութեան համաձայն, պատարագեց Տաճարին Տեսուչը՝ Տ. Հայրիկ Վրդ. Գալայճեան:

Շաբաթ, 7 Նոյեմբեր. - Առաւօտեան և գիշերային ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Հրեշտակապետաց, որմէ ետք Ս. Պատարագ մատուց Հոգշ. Տ. Նորայր Վրդ. Գազազեան:

Կէսօրէ վերջ Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը մեկնեցաւ Ս. Յարութեան Տաճար: «Հրաշափառ»ի երգեցողութեամբ հանդիսաւոր մուտքէն, ինչպէս նաեւ Ս. Գերեզմանի ու Գիւտ Խաչի նախատօնակը պաշտուեցան

վերջնոյս կից հայապատկան Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ, նախագահութեամբ Լուսարարապետ Սրբ Հօր: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Խաղ Վրդ. Ճոնտուրեան:

Կիրակի, 8 Նոյեմբեր. - «Տօն Գիւտ Խաչի». գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Լուսաւորիչ: Ժամարարն էր Տ. Շնորհք Արդ. Բալոյեան: Յաւարտ Ս. Պատարագին կատարուեցաւ եռադարձ մեծահանդէս թափօր՝ Քրիստոսի Ս. Գերեզմանին և Պատանատեղւոյն շուրջ, գլխաւորութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր, որ ամպիոկանի տակ, կենաց փայտի մասունքով կ'օրհնէր ժողովուրդը: Ս. Գերեզմանի Ատենին մէջ երգուեցաւ «Խաչի քո Քրիստոս» շարականը, որուն ընթացքին Լուսարարապետ Սրբազանը թափօրով խնկարկեց սրբավայրին շուրջ: Արարողութիւնները աւարտեցան կէսօրուան մօտ, Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ:

Շաբաթ, 14 Նոյեմբեր. - «Ամենայն Սրբոց». գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Հրեշտակապետաց, ապա Ս. Պատարագ մատուց Հոգշ. Տ. Գէորգ Արդ. Հայրապետեան:

Կիրակի, 15 Նոյեմբեր. - Գիշերային և առաւօտեան արարողութեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Հրեշտակապետաց: Կարճ դաղարե մը ետք Միաբանութիւնը, գլխաւորութեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեանի ուղղուեցաւ Ս. Յարութեան Տաճար: Պատանատեղիի և Ս. Գերեզմանի ուխտէն ետք Ս. Պատարագ մատուցուեցաւ մեր՝ Հայոց Վերնամատրան մէջ: Ժամարարն էր Տ. Ներսէս Արդ. Ալոյեան:

Ուրբաթ, 20 Նոյեմբեր. - Ս. Հրեշտակապետաց Տօնին նախատօնակը պաշտուեցաւ համանուն եկեղեցւոյ մէջ:

Շաբաթ, 21 Նոյեմբեր. - Տօն Հրեշտակապետացն Գաբրիէլի և Միքայէլի: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր եկեղեցւոյ Տեսուչ՝ Հոգշ. Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան: Յաւարտ Ս. Պատարագին, ըստ սովորութեան, կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ Ս. Աթոռոյս Բարերարոյի Աղանի Ճեմափրճեանի և անոր ննջեցեալ հարազատներուն հոգիներուն համար, նախագահութեամբ Գերշ.

Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեանի:

Կիրակի, 22 Նոյեմբեր. - Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ և ապա Ս. Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Շաբաթ, 28 Նոյեմբեր. - Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ և Ս. Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սամուէլ Վրդ. Աղոյեան:

Կիրակի, 29 Նոյեմբեր. - «Բարեկենդան Յիսնակի Պահոց». գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Հրեշտակապետաց: Կարճ դադարէ մը ետք Միաբանութիւնը, գլխաւորութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր, մեկնեցաւ Ս. Յարութեան Տաճար: Պատանատեղիի և Ս. Գերեզմանի ուխտէն ետք Ս. Պատարագ մատուցուեցաւ մեր վերնամատրան մէջ: Ժամարարն էր Տ. Բագրատ Վրդ. Պուրճեքեան:

ԴԵԿՏԵՄԲԵՐ 2015

Հինգշաբթի, 2 Դեկտեմբեր. - Ընծայման հանդիսաւոր նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Ուրբաթ, 4 Դեկտեմբեր. - «Ընծայումն Ս. Աստուածածնի երից ամաց ի Տաճարն». գիշերային ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց, որմէ յետոյ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի գլխաւորութեամբ միաբան հայրերը ինքնաշարժով մեկնեցան Գեթսեմանի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Պատարագը մատուցեց հանդիսապետ Սրբազանը: Ս. Պատարագէն ետք, ըստ սովորութեան, կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ ազգիս և Ս. Աստուածածնայ Տաճարին բարերար Կիլլայի Կիլպէնկեանի և Կիլպէնկեան գերդաստանի ննջեցելոց հոգիներուն համար:

Շաբաթ, 5 Դեկտեմբեր. - «Տօն Սրբոցն Գրիգորի Սքանչելագործին, Նիկողայոսի Հայրապետին և Միռոնայ Եպիսկոպոսին»: Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Հրեշտակապետաց, որմէ յետոյ մատուցուեցաւ Ս. Պատարագ: Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Վրդ. Աթաջանեան:

Կիրակի, 6 Դեկտեմբեր. - Գիշերային և

առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Հրեշտակապետաց, որմէ ետքը մատուցուեցաւ Ս. Պատարագ: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Ուրբաթ, 11 Դեկտեմբեր. - Յաջորդ օրուայ տօնի նախատօնակը պաշտուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ՝ նախագահութեամբ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի:

Շաբաթ, 12 Դեկտեմբեր. - Ս. Առաքելոցն Թադէոսի և Բարթողիմէոսի. գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան Ս. Հրեշտակապետաց վանքին մէջ, որմէ ետք մատուցուեցաւ Ս. Պատարագ: Ժամարարան էր Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան:

Կիրակի, 13 Դեկտեմբեր. - Բ. Կիրակի Յիսնակի. առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ, որմէ յետոյ միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար, ուր Ս. Պատարագ մատուցուեցաւ մեր վերնատան մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէճեան: Երբ ու դարձի թափօրներուն նախագահեց Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Շաբաթ, 18 Դեկտեմբեր. - «Սրբոյն Նիկողայոսի Միռոնայ Սքանչելագործ Հայրապետին». ժամերգութեանէն ետք Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ, ժամարարն էր Տ. Աւետիս Վրդ. Իփրաճեան:

Կիրակի, 20 Դեկտեմբեր. - Բարեկենդան Ս. Յակոբայ Պահոց. գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ, որմէ յետոյ Ս. Պատարագ մատուցուեցաւ նոյն եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Վրդ. Զաքարեան:

Երկուշաբթի, 22 Դեկտեմբեր. - «Յղութիւն Ս. Աստուածածնի ի յԱննայէ». առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ, որմէ յետոյ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի գլխաւորութեամբ միաբան հայրեր մեկնեցան Գեթսեմանի ձորը և «Հրաշափառ»ի երգեցողութեամբ մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, եպիսկոպոսական խոյր ի գլուխ պատարագեց և քարոզեց Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Ուրբաթ, 25 Դեկտեմբեր. - Յաջորդ օրուայ տօնի նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 26 Դեկտեմբեր. - «Սրբոցն

Յակոբայ Մծբնայ Հայրապետին», Մարուգէի ճգնաւորին և Մելիտոսի Եպիսկոպոսին»։ Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ, ժամարարն էր Տ. Նորայր Վրդ. Գազազեան։

Կիրակի, 27 Դեկտեմբեր. - Դ. Կիրակի Յիսնակի. գիշերային ժամերգութիւնը պաշտուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ, որմէ յետոյ միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար, ուր մեր մատրան մէջ մատուցուեցաւ Ս. Պատարագ. ժամարարն էր Տ. Շնորհք Արդ. Բալոյեան։ Երբ ու դարձի թափօրներուն նախագահեց Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան։

Պատրաստեցին՝

Տ. Գեղամ Ծ. Վրդ. Զաքարեան և
Տ. Ասպետ Վրդ. Պալեան



Ֆրանսահայ ուխտաւորներ 2016-ին
Պատրիարք Հօր հետ

**ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ ՍՈՒՏՔԸ Ս. ԾՆՆԴԵԱՆ ԵՒ
ԱՍԱՆՈՐԻ ՇՐՋԱՆԻՆ 2016թ.**

